

# ՄԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Իրուագներ Բաֆֆու եւ Բաշինջաղեանի ստեղծագործական համագործակցութիւնից

Երբ Բաֆֆի եւ Բաշինջղեան հանդիպում են միմեանց, շնորհաշատ նկարիչը տակաւին քսանուվեց-քսանեօթ տարեկան էր, իսկ մեծ վիպասանը՝ արդէն բոլորել էր իր կեանքի հինգերորդ տասնամեակը եւ թեւակոխում էր վեցերորդը: Բաֆֆի ունէր Բաշինջաղեանի կրկնակի տարիքը, սակայն այս տարբերութիւնը բնաւ չէր խանգարում, որ նրանք մտերիմ ու ջերմ բարեկամներ դառնային մանաւանդ, որ քիչ չէին շփման ու հոգեհարազատութեան համար հասարակայնօրէն պայմանաւորուած առիթները:

Յանկանալով բնութագրել իր դէպի Բաֆֆի ունեցած վերաբերմունքը երիտասարդ Շիրվանզադէ մի առիթով դիտել է տալիս, որ մեծ վիպասանը «երիտասարդութեան կուռքն էր»: Այս պարագայում միանգամայն հասկանալի է ոչ միայն Բաշինջաղեանի յափշտակութիւնը, այլեւ տարիքային տարբերութիւնը շրջանցող նրանց մտերմութիւնը:

Ստեղծագործական փոխյարաբերութիւններից ու աղերսներից բացի, նրանք ունեցել են նաեւ հանդիպումներ ու զրոյցներ, իսկ առանձին դէպքերում նաեւ նամակագրական կապեր, որոնց վաւերական «վկանները» ցաւօք սրտի մեզ չեն հասել:

1883 թուականին Պետերբուրգից վերադառնալով ծննդավայր Գէորգ Բաշինջաղեան մեկնում է «ստեղծագործական շրջագայութիւնների»: Սեւան-Նրեւան, Վաղարշապատ ու Օշական, Ալեքսանդրապոլ ու Անի կատարած ճանապարհորդութիւններից յետոյ, նոյն թուականի աշնանը նա Թիֆլիսում ցուցադրում է իր աշխատանքները եւ արժանանում մամուլի դժբախտաբանին: «Բաւական է, — ասուած է «Մշակի» Օգոստոսի 18-ի ինչքան մանուկների ուղեղը պղտորեցին սատանաների ու դժոխքի պատկերներով... Պէտք է պահեն առիթից օգուտ քաղել...»: Լրագիրը կոչ է անում միջոցներ հայթայթել, տպագրական եղանակով բազմացնել

Բաշինջաղեանի աշխատանքները հասարակութեան մէջ տարածելու համար:

Յուցահանդէս այցելողների եւ Բաշինջաղեանի արուեստով հիացողների մէջ է եղել նաեւ մեծ վիպասանը՝ Բաֆֆին: Ճիշտ է նա առանձին յօդուած չի գրել, սակայն փոքր-ինչ ուշ «Մշակում» հրատարակած «Մեր բարեգործական հիմնարկութիւնները եւ մեր բարեգործները» խորագրով յօդուածում Բաֆֆի անդրադարձել է Բաշինջաղեանի անձին ու գործին եւ ջերմ տողեր է նուիրել նրան. «Ահա հասարակութեան մէջ յայտնուել է մի երիտասարդ տաղանդ, — գրում է նա, նա նկարիչ է, նրա նկարները մենք ամէն օր տեսնում ենք փողոցի վրայ դրած եւ հիանում ենք: Երիտասարդը ցանկանում է գնալ արտասահման եւ աւելի կատարելագործել իր արուեստը: Բայց նա աղքատ է, միջոցներ չունի: Մեր բարեգործներից ոչ ոք նրան նպաստելու համար ուշադրութիւն չէ դարձնում, չնայելով, որ մի ժողովրդի մէջ կարելի է հարիւրաւոր ֆիզիկոսներ, քիմիկոսներ եւ այլ մասնագէտներ պատրաստել, բայց դարերի ընթացքում հազիւ թէ ծնւում են մի կամ երկու լաւ նկարիչներ: Մեր խօսքը պարոն Բաշինջաղեանի մասին է: Այդ երիտասարդը գուցէ մի օր Այվազովսկու արժանաւոր յաջորդը կլինի, բայց ոչ ոք միջոց չէ տալիս նրան իր ձիրքերը զարգացնելու եւ իր արուեստը կատարելագործելու»:

Այս դէպքերից փոքր-ինչ առաջ ժանդարմերիայի վարչութիւնը խուզարկում է Բաֆֆու բնակարանը եւ «Մշակի» խմբագրատունը: Բաֆֆուն արգելում են Թիֆլիսից բացակայել, իսկ «Մշակը» առնւում է հսկողութեան տակ: Այդ ընթացքում նա ժամանակաւորապէս դադարեցնում է իր թղթակցութիւնը «Մշակին»: Միւս կողմից նա, դեռեւս տարեսկիզբին, խոստացել էր աշխատակցել նոր լոյս տեսնող «Աղբիւր» մանկական ամսագրի աշխատանքներին եւ իր քաղաքացիական պարտքն էր համարում մասնակցել մանուկ սերունդի դաստիարակու-

թեան: Ունենալով այսպիսի շարժառիթներ՝ նա որոշում էր իր «Պարոյր Հայկազն» անունով վիպակը հրատարակել «Աղբիւր» մանկական ամսագրում:

1883 թուականի վերջերին Րաֆֆի «Աղբիւրի» խմբագրութեանն է ներկայացնում «Պարոյր Հայկազն» վիպակի ձեռագիրը, որ պարբերաբեր պէտք է լոյս տեսնէր ամսագրի 1884 թուականի համարներում:

Ունենալով ամսագրի ոչ միայն ներքին բովանդակութեան, այլև արտաքին ձեռնարկման, նկարագրուման, տպատառերի եւ հրատարակչական կուլտուրայի վրայ: Բաժանորդներին քանակը մեծացնելու, մանուկ ընթերցողներին ամսագրի հետ առելի ամուր կապելու եւ նրանց ճաշակը յղկելու նկատառումով խմբագրութիւնը հրատարակում է՝ ալբոմներ, նկարներ, պատկերազարդ գրքեր ու լուսանկարներ եւ տարուայ ընթացքում երկու անգամ իբրեւ ամսագրի «առաջին եւ երկրորդ պրեմիա» ուղարկում է իր ընթերցողներին:

Արձագանգելով մամուլի կոչերին եւ ցանկանալով իր ընթերցողներին հաղորդակից դարձնել Գէորգ Բաշինջաղեանի արուեստին «Աղբիւրի» խմբագրութիւնը վերջինիս յանձնարարում է ամսագրում տպագրուող Րաֆֆու «Պարոյր Հայկազն» վիպակի հիման վրայ կատարել մի թեմատիկ կոմպոզիցիոն աշխատանք: Ամսագրի խմբագիր Տիգրան Նազարեան նույնպէս ունէր Բաշինջաղեանի կատարելիք նկարը լոյս ընծայել բարձրորակ տպագրութեամբ եւ իբրեւ «պրեմիա» բաժանել իր մանուկ ընթերցողներին:

Գէորգ Բաշինջաղեան «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը կարգում է Րաֆֆու «Պարոյր Հայկազն» վիպակը եւ ոգեւորում է Մովսէս Խորենացու եւ Պարոյր Հայկազնի երկխոսութեան դրուագով:

Նրա ստեղծագործական խառնուածքի ու հայրենասիրական մղումների հետ համահնչիւն է դառնում վիպակի այն դրուագը, ուր Մովսէս Խորենացին կշտամբում, դատապարտում ու մեղադրում է Պարոյր Հայկազնին անձնական փառքի ու փառասիրութեան դրդապատճառով, հայրենիքը մոռանալու, նրա կանչը մերժելու համար:

Իր ստեղծագործութեան համար նիւթ դարձրելով ահա այս դրամատիկ ու յուզառատ պահը Բաշինջաղեան իրականացնում է «Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացին» թեմատիկ նկարը եւ 1884 թուականի սկզբներին յանձնում է խմբագրութեան:

Բաշինջաղեանի աշխատանքը հաւանութեան արժանանալուց յետոյ, 1884 թուականի Մարտին «Աղբիւրի» խմբագրութիւնը իր ընթերցողներին ծանուցում է, որ ամսագրի «առաջին պրեմիայի» համար Գէորգ Բաշինջաղեան նկարել է «Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացին» պատկերը, որի տպագրութիւնը Վիեննայում իրականացնելուց յետոյ կ'ուղարկուի «Աղբիւրի» բաժանորդներին:

«Աղբիւրի» առաջին «պրեմիան» ըստ սահմանուած կարգի պէտք է ընթերցողներին յանձնուէր տարուայ Յունուար-Յունիս ամիսների ընթացքում, որ, սակայն, ինչ-ինչ պատճառով Վիեննայում չի իրականացնում: Ամսագրի խմբագրութիւնը ստիպուած է լինում Նոյեմբերի համարում ներողամտութիւն հայցել «պրեմիայի» ուշացման համար. «Յաւում ենք, — ասուած է տասնմէկերորդ համարում, — որ խմբագրութիւնս անզօր գտնուեցաւ իր խոստման համաձայն տալ «Պարոյր Հայկազնի եւ Մովսէս Խորենացու» պատկերը»:

Մինչ այդ Իտալիա կատարած շրջագայութիւնից Թիֆլիս է վերադառնում Գէորգ Բաշինջաղեան: Նա Վիեննայում եղած ժամանակ Մըխիթարեան Միաբանութեան Ս. Ղազար կղզում տեսակցում ու ծանօթանում է Հ. Աւետիսեանի հետ:

Շատ կողմերով հետաքրքրական այս հանդիպման ընթացքում Հայր Ալիշան նկարիչ Բաշինջաղեանին ցոյց է տալիս իր «Այրարատ» աշխատութեան նոր տպագրուած մամուլները եւ հարցնում է. «Ինչպէ՞ս էք հաւանում նկարները»: Վերջինիս հիացնում են ոչ միայն գիրքն ու նկարները, այլ եւ՝ տպագրութեան որակը:

Այս պարագայում պէտք է հասկանալի դառնայ թէ ինչու Վիեննայում անյաջողութեան մատնուած նկարի տպագրութիւնը (թերեւս Բաշինջաղեանի խորհրդով) իրականացում է Վիեննայում եւ այն էլ Հ. Աւետիսեանի «վերահսկողութեամբ»: Առիթն այնպիսին էր, որ նկարը մանուկ ընթերցողներին առաքելը նորից է ուշանում, ուստի խմբագրութիւնը ստիպուած

է լինում իր բաժանորդներին յայտնել, որ ««Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացի» պատկերը, որ նկարել է Գէորգ Բաշինջաղեան եւ պատրաստել էին Վիեննայում»<sup>(\*)</sup> այժմ ուղարկում են Վիեննայի Հայր Աւետիսեանին, «այլապէս պատրաստելու համար» եւ խոստանում են առաջիկայ՝ 1855 թուականի սկզբում նկարը ուղարկել իրենց բաժանորդներին:

«Պարոյր Հայկազն ու Մովսէս Խորենացին» պատկերը 1885 թուականի Յուլիսին, նոր միայն, ուղարկում է ամսագրի բաժանորդներին:

«Աղբիւր» ամսագրում տեղ գտած խիստ կցկտուր նիւթերի միջոցով ծանօթանալով նկարի ստեղծագործման շարժառիթների ու լոյս ընծայման պատմութեանը, տրամաբանական է, որ պէտք է նաեւ ցանկութիւն առաջանար տեսնելու նկարը:

Հայաստանի պետական պատկերասրահի եւ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան Ֆոնդերում մեր որոնումները չտուեցին դրական արդիւնք: Գ. Բաշինջաղեանի հաւաքածուների մէջ մեզ չյաջողուեց գտնել այդ նկարին բնագիրը:

Հետազոտութիւնները պարզ դարձրին, որ Բաշինջաղեանի ցուցահանդէսներին վերաբերող կատալոգներում եւ ստեղծագործութիւնների ցանկերում, ինչպէս նաեւ նրա մասին գրուած մենագրութիւններում ու յօդուածներին մէջ եւ ոչ մի տեղ չի տեսնուել այս նկարի գոյութեան մասին:

Շուրջ 100-ամեայ անյայտացումից յետոյ, ի վերջոյ մեզ յաջողում է յայտնաբերել այդ նկարի տպածոյ օրինակներից մէկը: «Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացին» նկարի մեզ հասած օրինակը գրաֆիկական աշխատանքից կատարուած վերատպութիւն է: Ձափը հաւասար է 18-24 սանտիմետրի: Լոյս է ընծայուած լաւորակ թղթի վրայ բարձր տպագրութեան եղանակով:

Նկարում պատկերուած է այն պահը, երբ ըստ Րաֆֆու, բարկացած Խորենացին ոտքի է

կանգնում եւ Պարոյրի սեղանի վրայից վերցրնելով Կոնստանդին կայսեր հրովարտակը ասում է. «Ահա այդ մագաղաթի կտորն է, որ հրատարակում է Ձեզ: Արեւելքի ու արեւմուտքի կայսրը այդ հրովարտակով հրակիրում է Ձեզ իր մօտ: Իսկ միւս կողմից անբախտ հայրենիքը իմ բերանով կանչում է Ձեզ: Դուք մերժում էք նրա ձայնը եւ այդ պատճառով անարժան էք Հայաստանի գաւակ կոչուելու»:

Բաշինջաղեան Պարոյրին պատկերել է նրատաճ դիրքով, նրա դէմքին տրուած է մտազբաղ ու փոքր-ինչ վախեցած տեսք: Խորենացի կանգնած է, ձախ ձեռքում կրում է կայսեր հրովարտակը, իսկ աջը՝ բացուած ցուցամատը ուղղուած է դէպի Պարոյրը: Նա կշտամբում է փառքի ետեւից ընկած ու հայրենիքը մոռացած հոտորին: Խորենացու սեւեռուն հայեացքի, մարմնի կեցուածքի ու դէմքի արտայայտութեան մէջ նկատուած է նրա հոգու խռովքը, բարկութիւնն ու ցասումը:

Որքան մեզ յայտնի է սա առաջին դէպքն է, երբ Բաշինջաղեան ձեռնարկում եւ իրականացնում է թեմատիկ կոմպոզիցիոն նկարագրում: Այս իմաստով «Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացի» նկարով, թէեւ ոչ մեծ, բայց բոլորովին նոր էջ է սկզբնաւորում Գ. Բաշինջաղեանի ստեղծագործական աշխատանքների մէջ: Յետագայում գրական թեմաներով նկարներ կատարելու ցանկութիւնը նրա մէջ նորից է գլուխ բարձրացնում, եւ նա Շոթա Ռուսթաւելու «Վազրենաւոր» պոեմի ու Լերմոնտովի «Վայրի հիւսիսում...» բանաստեղծութեան հիման վրայ ստեղծում է մի քանի նոր կոմպոզիցիոն նկարներ:

Այսպիսին է եղել Րաֆֆու եւ Բաշինջաղեանի համագործակցութեան սկիզբը, որ յետագայում արգասաւորուել է նոր ու նոր դրուագներով, որոնց փաստագրական «վկանբրը», ինչպէս վերը նշեցինք, բոլորը չէ, որ հասել են մեզ:

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼԵԱՆ